# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-23/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով միջոցառումների հետ կապված ծառայություններ (Հայ-վրացական երիտասարդական համաժողով) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 23.12.2022թ. ժամը 14:30-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողով՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Զարա Ասլանյան

Հանձնաժողովի անդամ՝ Արմենուհի Պետրոսյան

Անուշ Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բաղալյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ իրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 Ընթացակարգի իրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | «ԱՍ ԹԻՄ » ՍՊԸ |
| 2 | «ՊԵՑՑՈ» ՍՊԸ |
| 3 | «Քլասթեր» ՍՊԸ |
| 4 | «Մոնթե կորպորեյշն » ՍՊԸ |

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|
| | | | **Առանց ԱԱՀ** | **Ներառյալ ԱԱՀ** |
| 1 | 5665600 | «ԱՍ ԹԻՄ » ՍՊԸ | 4770000 | 4770000 |
| | | «ՊԵՅՑՈ» ՍՊԸ | 5250000 | 5250000 |
| | | «Քլասթեր» ՍՊԸ | 5536496 | 5536496 |
| | | «Մոնթե կորպորեյշն» ՍՊԸ | 23000000 | 23000000 |

**4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտերի կազմման և ներկայացման, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 «ԱՍ ԹԻՄ » ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.2 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո՝ 2022 թ դեկտեմբերի 26-ին, ժամը 14:15-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 26.12.2022թ ժամը 14:15-ին**

**5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման մասին.**

5.1 «ԱՍ ԹԻՄ » ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

6. Տվյալներ ընտրված, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «ԱՍ ԹԻՄ » ՍՊԸ-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել «ՊԵՅՏՈ», «Քլասթեր» ՍՊԸ-ների հայտերը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

6.3 Հակադարձ աճուրդի արդյունքում «Մոնթե կորպորեյշն» ՍՊԸ-ի հայտը համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**7. Գնահատման արդյունքների մասին**

7.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին էլեկտրոնային ձևով՝ eauction համակարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

**Գնահատող հանձնաժողով՝**

---------------------------- Զարա Ասլանյան /նախագահ/

---------------------------- Արմենուհի Պետրոսյան

---------------------------- Անուշ Մխիթարյան

---------------------------- Կարինե Բադալյան /քարտուղար